

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հավելված

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան

պետական համալսարան» ՊՈԱԿ-ի

ռեկտորի 30.05.2016 թ. թիվ 344 Լ/Կ հրամանի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՆՆԵՐԻ ԱՆՅԿԱՅՄԱՆ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 5 26.05.2016թ.

Վանաձոր

2016թ.

1. Ընդհանուր դրույթներ

1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետ՝ Համալսարան) դպրոցականների օլիմպիադաների անցկացման կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանում է դպրոցականների օլիմպիադաների անցկացման նպատակները և խնդիրները, կազմակերպչական-մեթոդական ապահովումը, անցկացման և ֆինանսավորման կարգը, դպրոցականների մասնակցությունը և հաղթողներին ու մրցանակակիրներին որոշելու կարգը:

2. Օլիմպիադաների անցկացման հիմնական նպատակները և խնդիրները

2.1. Օլիմպիադաների անցկացման հիմնական նպատակներն են.

- տաղանդավոր, շնորհալի և ստեղծագործական կարողություններով օժտված աշակերտների հայտնաբերումը և նրանց մասնագիտության ճիշտ ընտրությանը նպաստելը:
- օժտված երեխաներին սատարելու անհրաժեշտ պայմանների ստեղծելը:

2.2. Օլիմպիադաների անցկացման հիմնական խնդիրներն են.

- զարգացնել աշակերտների հետաքրքրությունները ուսումնական առարկաների նկատմամբ, նպաստել կայուն գիտելիքների ձեռքբերմանը,
- բացահայտել և խթանել հետաքրքրությունը գիտահետազոտական գործունեության նկատմամբ,
- նպաստել տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացմանը:

3. Օլիմպիադայի անցկացման մեթոդական ապահովումը

3.1. Համալսարանում կազմակերպվող օլիմպիադայում կամավորության սկզբունքով կարող են մասնակցել պետական և ոչ պետական հանրակրթական, ավագ դպրոցների ու վարժարանների 9, 10-12-րդ դասարանների սովորողները:

3.2. Օլիմպիադան անցկացվում է հանրակրթական առարկաներից:

3.3. Համալսարանի օլիմպիադան անցկացվում է օլիմպիադաների առարկայական հանձնաժողովների կողմից հանրակրթական ծրագրերի հիման վրա մշակված առաջադրանքներով:

3.4. Յուրաքանչյուր առարկայական առաջադրանք պետք է բաղկացած լինի.

- հումանիտար առարկաների համար՝ 50 հարցից ոչ ավելի,
- բնագիտական առարկաների համար՝ 20 հարցից ոչ ավելի:

3.5. Գնահատումը կատարվում է 20-միավորանոց սանդղակով՝ պահպանելով տասնորդական միավորներով գնահատելու կարգը:

3.4. Առաջադրանքների կատարման համար սահմանված ժամանակը 2,5 ժամ է:

4. Հաղթողների որոշման կարգը

4. 1. Օլիմպիադայի հաղթողներ են ճանաչվում այն մասնակիցները, որոնք հավաքել են՝

- 1) 20-19 միավոր՝ 1-ին տեղ,
- 2) 18 միավոր՝ 2-րդ տեղ,
- 3) 17 միավոր՝ 3-րդ տեղ:

4.2. Օլիմպիադայի հաղթողներին հանձնվում են առաջին, երկրորդ, երրորդ կարգի դիպլոմներ:

4.3. «20» և «19,5» միավորներով մրցանակային առաջին տեղը զբաղած մասնակցին Համալսարանի ուսուցման վճարովի համակարգ ընդունվելու դեպքում հնարավորություն է տրվում օգտվելու ուսման վճարի մասնակի փոխհատուցումից համաձայն «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսանողական նպաստների, պետական և անվանական կրթաթոշակների տրամադրման» կարգի 38 կետի 19 ենթակետի:

4.4. Օլիմպիադային խրախուսված մասնակիցներին հանձնվում են շնորհակալագրեր: Յուրաքանչյուր օլիմպիադայում խրախուսական մրցանակները տրվում են հանձնաժողովի որոշմամբ:

4.5. Տվյալ առարկայից մրցանակային տեղերի և խրախուսական մրցանակների բացակայության դեպքում հանձնաժողովների որոշմամբ տրվում են մասնակցության վկայականներ՝ «-----տվյալ թվի օլիմպիադայի մասնակիցների մեջ լավագույն արդյունքը ցույց տալու համար» բովանդակությամբ:

4.6. Օլիմպիադայի ընդհանուր ղեկավարությունը իրականացվում է համագործակցության և կապերի բաժնի կողմից:

5. Օլիմպիադայի ֆինանսական ապահովումը

5.1. Օլիմպիադայի անցկացումը ֆինանսավորվում է Համալսարանի բյուջեից: Տրամադրվող միջոցները նախատեսված են անհրաժեշտ նյութերի ձեռքբերման և հաղթողների պարգևատրման համար:

6. Օլիմպիադայի անցկացման ընթացակարգը

6.1. Համալսարանի օլիմպիադան անցկացվում է յուրաքանչյուր տարվա մարտ-ապրիլ ամիսներին:

6.2. Դպրոցականների առարկայական օլիմպիադան կազմակերպվում է Համալսարանում մեկ փուլով:

6.3. Օլիմպիադան անցկացվում է տարիքային խմբերով՝ IX, X, XI, XII դասարանների աշակերտների համար:

6.4. Օլիմպիադան կազմակերպելու համար Համալսարանը տեղեկատվական նամակ է ուղարկում դպրոցների տնօրեններին օլիմպիադայի անցկացման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ:

6.5. Հայտերը ընդունվում են էլեկտրոնային կամ գրավոր մինչև տեղեկատվական նամակում նշված հայտագրման վերջին օրը: Հայտերում անհրաժեշտ է նշել դպրոցի հասցեն, առարկան, դասարանը, աշակերտի ազգանունը, անունը, հեռախոսահամարը (ըստ Ձևանմուշի):

6.6. Հայտերը ներկայացվում են Համալսարանի համագործակցության և կապերի բաժին:

6.7. Դպրոցներից ստացված հայտերի հիման վրա կազմվում են աշակերտների ցուցակները՝ ըստ առարկաների և դասարանների:

6.8. Օլիմպիադայի մասնակիցները գրանցվելու համար ներկայանում են Համալսարան օլիմպիադան սկսվելու ժամից կես ժամ առաջ:

6.9. Օլիմպիադայի առաջադրանքները ստուգվում են օլիմպիադայի ավարտից անմիջապես հետո:

6.10. Օլիմպիադայի արդյունքները և մասնակիցների ստացած միավորները հայտարարվում են օլիմպիադայի ավարտից հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում: Արդյունքները տեղադրվում են Համալսարանի կայքում:

6.11. Օլիմպիադայի մասնակիցների թեստային առաջադրանքները և աշխատանքները պահպանվում են համագործակցության և կապերի բաժնում 5 տարի ժամանակով, որից հետո ոչնչացվում են:

7. Ամբիոնների մասնակցությունը օլիմպիադայի կազմակերպման և անցկացման գործընթացում

7.1. Օլիմպիադայի անցկացման օրվանից մեկ ամիս առաջ բաժնի վարիչի կամ պրոռեկտորի ստորագրությամբ ամբիոններին ուղարկվում է տեղեկատվական գրություն՝ օլիմպիադայի անցկացման մասին:

7.2. Օլիմպիադայի մեթոդական ապահովման նպատակով ամբիոնների վարիչների առաջադրմամբ կազմակերպվում են առարկայական հանձնաժողովներ և ներկայացվում են ռեկտորի հաստատմանը:

Առարկայական հանձնաժողովի գործունեությունը իրականացվում է համաձայն սույն Կանոնակարգի:

7.3. Առարկայական հանձնաժողովը կազմում է առաջադրանքների փաթեթը, գնահատում է առաջադրանքների կատարումը, որոշում է հաղթողներին և մրցամանակակիրներին, լուծում է օլիմպիադայի ընթացքում առաջացող հարցերը:

7.4. Ամբիոնները սահմանված ժամկետում՝ օլիմպիադայի անցկացման օրվանից առնվազն 10 օր առաջ դպրոցական ծրագրերի շրջանակներում կազմում են օլիմպիադայի առաջադրանքների 4 տարբերակներ IX, X, XI, XII դասարանների համար տարբերակների պատասխաններով:

7.5. Ամբիոններն օլիմպիադայի անցկացման օրվանից 10 օր առաջ առաջադրանքների տարբերակները և պատասխանների ձևաթղթերը փակ, ստորագրված, կնքված ծրարներով ներկայացնում են համագործակցության և կապերի բաժին: Ներկայացվում են նաև առաջադրանքների էլեկտրոնային տարբերակները:

7.6. Առաջադրանքներն անհամապատասխան ձևով կազմելու, ներկայացնելու և ներկայացման ժամկետները խախտելու դեպքում տվյալ առարկայից օլիմպիադա չի անցկացվում:

Առարկայական օլիմպիադայի մասնակիցների հայտերի լրացման

	Ազգանուն, անուն, հայրանուն	դպրոց	դասարան	առարկա	հեռախոսահամար
1					
2					
3					
4					
5					
6					
7					
8					